

Կոնդակ հաստառութեան նորընտիր ուսուցչաց Երեսիսեան հոգևոր դպրանոցի հայոց Տփղեաց. թ. 1041:

— Ծանուն Տ. Կարապետ աւագ քահանայի Սէթեան Կ. Պօլսոյ, որով ըստ միջնորդութեան Ամեն. Ս. Պատրիարքի Կ. Պօլսոյ, շնորհին նմա իրաւունք կրելոյ զխաչն, որ շնորհեալ է նմա ի հոգեկոյս Տ. Գէորգայ Դ. հայրապետէ և որոյ կոնդակն այրեալ է ի հրդեհի. թ. 1060.

— Օրհնութեան յանուն Պետրոսի Կ. Տ. Մարտիրոսեան Բաշգիւղացւոյ վիճակին Կարուց վասն նուիրելոյ նորին մատենադարանի Ս. Աթոռոյս զգրչագիր աւետարան մի. թ. 1061.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. ՍՐԲԱՆՈՅ Միտոնի օրհնութիւնք . Կ. Վ. . 387
2. Ս. Միտոնօրհնութեան հանդիսք 389
3. Լամբերի ժողովր Թարգմ. Թորոս Բան. Զուրաբեցի. 391
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲՐՈՆԻՊՈՆ 401

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԵՏՄԱԿԱՆ.

5. * * * * * Յ. Յովնանիսեան . 406
6. Նամակ եմբագրութեան Սանկի եպիսկ. Խաչադեան 406
7. Մեծ Սոխրասի Ս. Էջմիածնի և Երուսաղեմի Ս. Յակովբեանց վանքի մեղադրեր. . Մ. Վ. . 410
8. Յաւելուած Գրիգոր Խաչեցոյ Պատմական վիպասանութեան Գր. Խաչաբեան . 411
9. Հ. Գեղեցե. Համանոստրիւն Ռիզակդական Կալարեւի պատմութեան (քարգմ.) Մ. Վ. (Շարունակելի) 413
10. Խորհնացոյ ժամանակը որոշելու նոր փորձ. Գալուստ Տէր Մկրտիչեան 422
11. Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը Մ. Արեղեան (Կը շարունակուի) 424

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ.

12. Թե Բնէ միջոցների պէտք է դիմեն դպրոցները կախազուտ առաջն առնելու համար . Գ. Ղ. 431
13. ՄԱՐԱՆԱԲԻ. 434
- ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.
14. Հայի համբերասար ողին Կ. Կ. . 435
15. ՄԱՅՐ ԱԹՈՒ. 438
- ՏԱՃԱՎԱԶԱԹ 449
- ՊԵՏՏՈՆԱԿԱՆԲ. 454
- Յաւելուած 456
- Յայտարարութիւններ.

ՅԱՐԵՆԻԱՆԻ ԲԱՐՈՅԻ 1897Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ և ԶՈՎՏԵՄԲԵՐ.

ՆԵՐՔՈՂԵԱՆ

ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՅ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՒԱՅ.

ԱՍԵՑԵԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

և

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱՍՆԱՅԻՈՅ.

(Շարունակութիւն ևս վերջ) *

Եւ կատարեալ զգոհութիւնն, առնոյր ընդ իւր զերանելին և ելանէր յիննականն վանսըն՝ առ աստուածարեալ միանձունսն որ էին թըւով հինգ հարիւր միսկամ եղբայր: Որոց բերկրեալ ընդ գալուստ սրբոյն՝ մանաւանդ ընդ աստուածատուր նշանն, և մտեալ ի տաճարն՝ աղաղակեն Զուրաբեղեն և զՄաեքն՝ զԴրանն և զԵարկին, տալով փառս և աւրհնութիւն առաքողին և հայցելին շնորհել ընդ երկայն աւուրս: Իսկ աստուածային և քահանայապետական զլուին, խոնարեալ խաւսէր ի խորոց սրտէ իրրե ընդ կենդանի ընդ նըշխարս Կարապետին:

Ո՛ղ ձայն բանին և չաւուշ ա արքային. տեսող յարգանդին՝ և երկիրպագող յորովայնին. նախընթաց թաղաւորին և պատրաստող պողոտային. սրբող սրբողին՝ և տեսող անտեսին. ծանալթ անծանալթին՝ և ցուցանող որոց տեսին. մեծ ի ծնունդս Եւայ. Բահանայապետական զառակ, ամլածին ծաղիկի, հրեշտակատուր տղայ, ողջախոհ տրախիլ, ր անպատասուն տառարակ, մարախաճաշակ մարգարէ. ճրագ ճառագայթին և արիւսեակ արեգականն. հաւախաւ քաղցրաձայն վանող զիշերի և քարող ալեմնան. յարուցող յընթացս և ի գործս և ժողովող յորջս և ի մտրիս. զարնանարեր ծիծառն և արգասին զյերկինս. որպէս եղեր առթող հարսինն, և փեսաւէր փեսային գալըտեամբդ կրկին: Այսպէս

* Տես. Արարատ թ. Ը. եր. 398.

ա. ռամկական քառ ե.

բ. Ձիայ ն. Հ. Ի. յունարեն քառ ե.

գ. Անճամօր քառ ե, լիայ ն. Հ. Բ.

եղեր [թղ. 16 ա] և Հայոց աշխարհիս եկաւորութեամբ յերկրիս նախաշաւեղ ամենայն բարեաց:

Զի և քակեցան կուռքն և փշեցան մեհեանքն և հալածեցան Դիսանեանքն. և բացաւ զուռն ողորմութեան Աստուծոյ, ամ ըստ ամէ շնորհել մեզ: Զի որքան եկիր՝ և ես աստ, ոչ պակասէ բարութիւն Տեառն յայսրմ՝ աշխարհէ. որ ես վերին Նրուսաղէմ հիմն և հաստատութիւն հաւատոյս մերոյ. զի քո բարեխաւսութեամբ առաքեցաւ մեզ համանշմանս քո յանապատէ՝ բերել բրարիոն ճրգնութեան իւրոյ, որով լուսաւորեցան որդիք Նոր Սիոնի, ներբողելով զառաքողն ձեր ի փառքս և ի զովեստ անուան իւրոյ:

Սւ հանկուցեալ և հիւրնկալեալ՝ որպէս լինառ հայրն * ընտրեալ հնչման: Սւ ի վաղիւն յուղի անկեալ ընթանալին հետիոտս և անցանէր յայնկոյս Եփրատ գետոյ և հանդիպեալ թաղաւորին՝ Վռամշապհոյ, զի զայր ի Միջագետաց, և տեղեկացեալ էր զիրացն եղելոց: Որ և ի տեսանել զուրբսն ի բացուստ իջանէր յերիւարէն և զայր հետիոտս ընդ առաջ նոցա և ի ծունր իջեալ երկրպագէր հայրապետին և վարդապետին. և հոլանեալ հայցէր և առնոյր աւրհնութիւն և համրոյր: Սւ զըւարձացեալ ցնձայր հոգով և խայտայր մարմնով, զնոյն առնելով և զաւրաց նորա: Սւ միաւորեալ զաին խնդութեամբ՝ ի մտի եղեալ տեսանել զմեծ անապատն որ էր սեփհական թաղաւորացն Արշակունեաց, հինկ հընկիցն հաւացեալ և ի Տրդատա քաջէ:

Սւ երկրպագեալ սուրբ տեղեացն և ընծայեալ նշխարաց առաքելոցն Տեառն, որ և անուամբ նոցա յորձորջի. ուր էր վարժեալ Մովսէս և աւծեալ Ահարոն: Սւ իսկոյն ելանէին և տեսանէին զաստուածաբնակ տեղին՝ և զհրեշտակացն բանակն. զանմարմնաւորսն և զանարիւն արիւնաւորսն, զըւարթագոյն զըւարթունսն՝ և զկենդանի նահատակսն. որք թըւովք էին հարիւրք եւթն կուսանքն և կա-

տարեալքն, որք ի մի սեղանոյ վանէին: Սւ էր վանելումն սեղանոյն զոր նախահաււրն հրամանեաւ յետ յանցանելոյն և ընպէլ ինքնարուին: Սւ արիւնաւոր կերակուր ոչ մըտանէր ի վանս նոցա. և էր սահման նոցա կանոնքն Բարսղի. և ոչ էր ի մէջ նոցա իմ և քոյ ըստ առաքելոցն աւրինաց: Սւ թէպէտ և զոյին զեաւդք և աւանք նըւիրեալք ի թաղաւորացն՝ զայն որքոց և այրեաց՝ ուրկաց և անցաւորոց ընձեռէին, և ինքնաձեռն արուեստիւն շատանալին ըստ Տեառն և առաքելոյ:

Զոր տեսեալ արքային՝ հայրապետին և վարդապետին՝ սքանչանալին և հիացեալ տալին փառս խնամողին և արարչին նոցա. և նաէին յերեսս նոցա զի փայլէին զեղնեալք որպէս քրքում: Որք և դաին առ հասարակ և ողջունէին զուրբն Մեօրոք զընկերակիցն իւրեանց, և առնուին զկենդանի պատգամն՝ և եռաին հոգւով: Սւ ձայն բարձեալ՝ շնորհընկալ լինէին շնորհացն. և երկու զըւլքն հանդերձ անդամաքն՝ աւրհնէին զովէին և փառաբանէին ըզմիասնական երրորդութիւնն Աստուած, որ այսպիսի պարգև շնորհեաց ինքեանց և անձանց իւրեանց՝ [թղ. 16 բ] յինքեանց ժամանակի: Սւ յարոյց որդի և զաւակ նորոյս Խորայիլի՝ որ լուսաւորեաց զսիւնս հաստատութեան և ճըշմարտութեան՝ զժողովուրդս Աստուծոյ կենդանոյ ի փառս մեզ և ի պարծանս Բրիստոսի: Սւ կատարեալ զուխտն դառնալին իւրաքանչիւր ի զործ իւր. ոմն ի դատել և ի պատժել և զիրաւունս սիրելի ընդ առաւաւանս պանանել և սատակել զթիւրեալսն յուղոյն ճըշմարտէ. և միւսն հոգեւոր զաւազանաւն յանդիմանեալ սաստեալ մխիթարեալ և իջուցանել զիւզն ի մօրուսն և ի զրպանն:

Իսկ երանելին առեալ հրաման և ընթանայր ընդ բոլոր աշխարհն՝ ընտրելով համբակս ողջախոհս և ուշիմս քաղցրաբարբառս և երկայնավանկս: Մանաւանդ յասացից ծջմարիտ խոյս տարեորս՝ և զառինս անարատս. ձագս տատրականց՝ և անզոյդ աղաւնիս երե-

* Լուս. Արամ:

1. Թե այս ևս թէ ինչ առաջ Ինքնական վանքի մասին տեղեկութիւնները, մանրամասնութիւններ են և որ լուծին զխաւսոք առիւթները:

ա. Այս քաղցր երկրոյ անցումն և պատմութիւն:

1. Խոր. Գր. Գ. զր. Մի. Ժողովեալ մանկունս ընտրեալս ուղեղս ևս քաջասունս փափկամայնս և երկարոգիս...:

խայրիս և Ղևտացիս ընծա Տեառն որո է և
բաժին նոցա, և ի մէջ աղերս փոխանակ պըտ-
ղոյն Սարեկայ: Եւ միշտ ի զինումն և ի մե-
ռումն յայրումն և խորովումն և ոչ պակա-
սումն, ճաճէր ի մու՝ և յաւրինէր լսարան՝ և
կացուցանէր Հըռետոր ի ծայրադոյն ծերու-
նեացն:

Այսօրոս առնէր զհարկատարս Արեւաց
արքային զկէս բոլորի ատակիս մէլոյ: Ծաղիկն
համաստիւոռ ծնունդ զիտանոցին՝ ծառն կե-
նաց, ծորումն շնորհացն, ծրարն տաշխից՝ ծի-
րանածին արմատն, ծայրագոյն բարունին. որ
լուսաւորէր զեկեղեցի և ընդր աստուածաին
զանձիւք ճոխացեալ և փարթամացեալ: Եւ
զեցեւցանէր զմանկունս գերագոյն հայիւն աս-
տուածաին բանիւն, նախ անիոյթ առնելով
զաւտարին շողաւքորթն, մինչև լիացին իւր-
քն, և ի մնալ նշխարացն և յանկանիշ փշը-
րանացն, ներէ կերակրել աւտարացն. լսել մաղ-
թանաց Սիոնի՝ որ պաղատէր սակս դատեր
իւրոյ. զի զեռ կոյս ելոյր՝ ի լուսաման փե-
տին չև պատառեալ զքաւդն և տարածեալ
զանձն իւր յապականումն սեղեխաց և հոմա-
մանեաց որպէս այժմ:

Ասան որո զիմէ ի կողմանս Դաղմանունեաց, այսինքն յաղինս վիռացուոց. ասանէ և նոցա տառ. ք ըստ բային իւրեանց՝ զեղաղէշ և վաելուէ՝ թողլով ի ծանաթիցն թարքմանս նոցա: Եւ ընթացեալ ի նահանգն Առանայ, քանզի առաւելոյր հողին շնորհաց որ ի նմա, զետ բղխելով յորովայնէ նորա՝ օռոգել զոլորտս ք Թիեզերաց: Բանզի որ երևեցաւ նմա ի սոկքովթ ք թաթ ձեռին զրիւ ի սալ սրտին, որպէս Բաղդասար՝ ոչ հեռացաւ, այլ հանկեաւ և բնականց միշտ մերձաւոր՝ նախ քան զձայնին հասանել. յորմէ առթեալ նշանէ և նոցա զիր յոլով՝ ըստ թանձրութեան բառին: Որք և արժան էին ձրին աւաղակոչքն և ուղղընթացքն՝ և անկրկին՝ կայծքն և կանաչքն: Որք կոյս

պահեցին զհաւատն և անխառն զոսկին սա-
փիրայ միշտ և յաւէտ, զորս զարդարէ և
թողու ուսուցիչ և թարգման և դարձեալ
գա յիւրան:

Եւ յառաջէ, ի Բիւզանդոն՝ և ձեռնադրի
եկեկսիաստէս¹ և առնու հրաման՝ մտալն նո-
ցա իշխել ուսուցանել և կարգել զպրոցս՝ կե-
րակրիլ յարքունուստ զոր և արար իսկ: Եւ
համահաւաքեաց զբոլոր զարմն և զաւակս
[Թգ. 17^ա] Հայոց ի մի հաւառ և հովիւ
հոգեւոր, մի կրտսն՝ զիւր և զպրուծիւն՝
կարգ՝ կանոնք՝ ^{Եւ ինքն} ^{կարգաւ} ^{իւր} ^{պարտաւ} ^ս յամե-
նայն տեղիս նոցա և մեր: Եւ ինքն բերկրեալ՝
ուրախ լինէր յարարածն իւր, որպէս էնն
ի սկիւրանն և արթունն յառաջնումն: Իսկ՝
զրնաւ իրագործութիւնն ուսուցանեն ճշմար-
տախաւսն և կորովաբանն, և առաւիաւս զոր
յիշեցաք՝ աւելորդ էր զնոցայն երկրորդել:
Բայց առանց հիման և պատճառի անկար էր
սկիզբն առնել շինածոյ, և իրաւ եմ. քանզի
իմաստունն շինէ ի վերա արկեալ հիման ճար-
տարագն:

Եւ արդ՝ երկնչիմ՝ շեղիլ ի շաւղաց նո-
ցա՝ գուցէ՝ զթեցից ընթանալ ընդ անկոխ սով-
քովԹ. ք խուլ զիղծն և կատարել զդիտաւո-
րութիւն յորդորական շարիս՝ զոր կանխաւ
խոստացաք հիւսել հիւսարանի՝ ներբողելով
զապննիազն գովեառի։ Եւ արդ՝ եթէ ունէի
զիմաստութիւնն Սողոմոնի՝ և դարազութիւնն
Դաւթի՝ և զհոգին Պաւղոսի՝ գուն ուրեք
հետեւէի արժանաւորութեանն։ Թող թէ ան-
հմուտ վարժից քերթողութեան՝ և գրակա-
նութեան, ընթադատութեան 7 առողանու-
թեան՝ և արոհութեան։ Բայց յուսալով յայն
վասն որո բանս՝ և յայն որ տայն բան աւե-
տարանչաց՝ ազդել յիմաստս մեր՝ և շարժել
զկրնգնդոցս 7 մեր՝ ճառել փոքր ի շատե՝ զայն-
մանէ որ ճշմարտութեամբ ճոխացոյց զմեզ։

ա. Այս երկու բանը տարբերկն են, որ նախընթաց
բաների միջևն ունին: Ինչ- քանադրուրիսն է «նպատակ»
«նշան» բարին:

բ. Լուս. «ստորագրութիւն». Տես նախընթաց էջի Տեղի Գ.:

q. lnu. «рѣсрну».

η· λιν· αγγικον:

1. Խոր. Գ. Դ. Ժ. Թ. Կոնստանդնուպոլսի Սահակ
գրած բղթում տնային և շահագործական վարդապետների գրե-
ցած զմեռանդ:

м. л. н. а. «уфрмгуг».

p : l_{min} , «q/r».

q. l. n. n. « q b q b r n ».

η. λένω. εφ' ημεραν.

1. Այսպէս անկէ համարուող քանի որ, իրի եւ
կորիւնը:

Արուսեակն իմանալի՝ աշխարհիս բանա-
ւորի առդն ճաճանչաւոր, առաւաւան լու-
սածագ, արշաշուրշն՝ մթնահալած, արփին
հրափայլ՝ և ազն առողջաշունչ, ամպ քաղց-
րացաւ՝ և անձրե շահարար, աթոռ անեղին՝
և հանգիստ ոչ հանկողին, արմատ անմահին
և առաքեալ առաքողին, արբա և աքիմասա, ք
ամատ տարադէր, ք այն հորդահոս անդա-
տան մրգաբեր, առու պղպղուն, արբուցանող
դտունկա և զբանջարս, արգասիք և ատոր, ք
արտանըազ նահատակ՝ և արտաշիկագոյն
շնորհք:

Բրաբիոն յաղթող, բոլորեալ պսակ, բու-
րաստան բերկրեալ, բուրվառ ոսկիացեալ, բու-
րումն խնկոց, բարունակ ընդարձակ և բերրի
որթ, բնաւից գերագոյն, բնութիւն բարի
բնակարան երրորդութեանն, բեզել բաղինոն, և
բնակեալ ի Բերսէլիէլ, բարակ ք յարփայլն, բե-
րող աւետիք, բանաբեր հրեշտակ, բիւրեղ և
դժուարագիւտ: Բըթուլ՝ բոլոր անձամբ, բա-
զէ արագաթռիչ, բու մահու մեղաց, բրբրաշ
կեփազէ, ք բուծող հոգոց, բազմակ Սիոնի,
բաղձալի բնաւից:

Գեղեցիկ շառաւել, գլուխ բարունեաց,
գերագոյն զլիտն միացեալ անդամ, գրիչ ա-
րագազիր, Դահաւորակ արքային, գոճաղմ
պատուական, գերանդի թըռուցեալ՝ գունդ ոս-
կի, գոյնագոյն նկար եկեղեցոյ. Դամադիէլ աւ-
րէնսուսոց, գուսան հոգեոր, գունի* պըտ-
ղալից, զարաասժ ողկուզալից:

Երկրորդ հաւ և լուսաւորիչ Հայոց, ե-
ղեգն խունկ յարածուխ ի կաթուղիկէ:

Դռնաբացող արքայութեան և իմաստու-
թեան, զորշմ հաւատոց, զիտող՝ և դէտ ի
տանս Աստուծոյ, զարմանիչ յարակա հոգեոց,
[Թղ. 17 ք] գաաաւոր արդար, զեսպան յԱս-

ա. Ձեռ. արշաշուրշն.

բ. Լուս. «նրայր».

գ. Անհասկանալի բառեր են.

դ. Ձկայ Ե. Հ. Բ.

ե. Անհասկանալի բառեր են.

զ. Լուս. «փայլակն».

է. Լուս. «տկն».

ը. Անհասկանալի.

ր. Անհասկանալի.

*. Լուս. «դրսիս».

ժ. Անհասկանալի է.

սուծոյ, զեսպան մեղրալից՝ և դէոն՝ կտակա-
բանաց:

Երանելի մարդ, երջանիկ յազգաց, երամ
երամ թըռուցող ի վեր, ելմունիք ի բնաւից,
Հաւաքեալ առաքինութեամբ, զարդա-
րիչ նոր Խարայելի, զարդ եկեղեցոյ, զարմա-
զուն համայնից, զատեալ յաշխարհէ, զինա-
հարեմ առ քեզ՝ զի քո եմ զարմակից, զու-
րա՝ ի մանանախ առաքինութեամբ և զիտու-
թեամբ:

Էական բանին բղխող, էմակ ք ծաղկալից:

Ընդ մեզ բանին առիթ, ընդ վերինն նա-
խանձող, ընտրեալ յառաջագոյն Էին, ընտանի
մեր, ընտրող զլաւն ք և զկայունն, ընդ ուխտ
անխնաւ անցող, ընդ անմարմինն դասեալ:

Թագաւորին զինաւոր, թանց մեղաց, թա-
փումն շնորհաց, թուղթ երկնառաք, թեա-
պարեալ հոգեով, թալպիւթեան և աշտարակ:

Ժողովող երկրորդ, ժիր մշակ, ժապաւէն,
ժառանգաւոր արքայութեանն, ժամանակին
յուցումն:

Ի մարդկանէ հրեշտակ, ի Տեառնէ ա-
ռաքեալ, ի յերկրէ որոշեալ, ի յերկինս թը-
ռուցեալ, ի կացեալսն խառնեալ, ի վեր քան
զմորդ, ի Էքոնիոս՝ ի Երբար յաշխարհէ, ի
Ամնն եկեղեցոյ, ի ամբ իմաստից, ի էլտա-
րաթառ:

Կարէս սրբոց, կատարեալ մարդ, կամա-
րար Աստուծոյ, կերակրող հոգեոց, կարդա-
ցուցիչ յարակա, կասիւս ք բազմադաւր, կեր-
պարան էին, կացեալ անախտ յաշխարհի, կե-
փաս կրկին:

Հոգոց ընդունակ, հրոյն երկիր, հրեշտակ
ի մարմնի, հաւ քաղցրաձայն, հիմն հաւա-
տոյ, հաւրն հաւատարիմ, համայնից ցանկա-
լի, հարաւ հնչող, հալածիչ հիւսիսի, հիւան-
դաց զեղ, հըռափաէլ:

Հայնակից անմարմնոց, ձիր յԱստուծոյ,
ձրի տըւող շնորհաց, ձիւնացեալ Սաղմոն*.

ա. Լուս. «արկղ».

բ. Լուս. «անուանի».

գ. Լուս. «նովիս».

դ. Ձեռ. «զալկն».

է. Լուս. «մարտից».

զ. Բառերը անհասկանալի են:

*. Լուս. «երուստղիմ».

ձուլիչ հոգւոց, ձեռք տառից, ձիաստան այլ-
ազանդից:

Համբար մշտածագ, զօւտ խնկատու, զու-
կըն պատուեալ:

Ճշմարիտ առաքեալ, ճրագ եկեղեցոյ,
ճանապարհ իմաստից, ճգնաւոր ճշմարիտ, ճե-
մարան հաւր և որդւոյ, ճառքալ ողկոյզ, ճշմա-
րիտ որթւոյն բարունակ:

Մարգ Աստուծոյ, մեղու ծաղկտար, մարգ
ծաղկալից, մարմնաւոր անմարմին, մաւր Սիոնի
անդրանիկ, մակաղատեղ հաւտից, մեղ առ
Աստուած բարեխաւս:

Երամատոյ մերո յոյս, Եիսուսի աշակերտ,
յարութեան քարոզ, յախտեան ուսուցիչ,
յաղգէ եղեալ որդի, յաղամաղան[դ]ուածոյն
անխար, յորդահոս աղբիւր, յարակա զբաւոյն,
Եովբէ* և Եղգրաէլ:**

Մանեակ անմանեոյն, ներածագ լոյս,
նշան բարեաց, նշի ծաղկեալ, նռնաձե զան-
կակ, նոր աշխարհի լոյս, նաւակատիւ խորա-
նիս, նետ փրկութեան Տեառն, նորարոյս բող-
բոջ, նարգոսբուրեալ, նետ ի կապարձ Տեառն:

Շնորհք շնորհողին, շիշ իւզոյն աւծու-
թեան, շտեմարան բարեաց, շառաւել նշու-
լից, շուշան*** առ շամբն, շեղջ ցորենու շիթք
անձեւաց, շինող կաթողիկէիս, շրջապատ պա-
րիսպ, շեշա**** յընթացս վարուց, շաւելին
արքունի ցուցող, շարեալ մարգարիտ, շափի-
ղայ փայլեալ:

Ուրախութիւն հաւուց և հաւտից, ու-
րակ բանիւ ուսուցիչ անխարտախ, ոսկիարան,
ոփացող աստեանցս, [[թղ. 18 ա] ուրբական
թաղաւորին, ոտանաւոր հաւատի ուխ հա-
րաւոյ, որդի սիրելի որդւոյն հարադատ:

Չուեող վեր և սպի չորաբուտ, չարչա-
րեալ մարմնով, չուեող ինչս, չարիող աւտա-
րիս, չարարող փոյթ չէիս, չուեող ըստգտանք
ի սրտի, չամաչես յախտեանին:

Պատարագ էին պարապեալ ուսման, պը-
տուղ կենաց, պսակ եկեղեցոյ, պատըւար բար-
ձրագոյն, պարիսպ Սիոնի, պատուհան եղ-
բար որդւոյն, պարտեղ ծաղկալից, պոշարին

զեղեցիկ, պահող զամենայն պատուիրանն,
պատուեալ ի համայնից, պրակ առաքելապէս,
Պաւղոսի հաւատար, Պետրոսի վիմին հաստա-
տող, պարակիր զբարթնոյն:

Ջրոյն կենաց առու, ջահ կեկեղեցոյ,
ջերմ իսկ սիրոյն, ջան ի վաստակս, ջամբեցու-
ցանող մանկանց:

Թահ բարի, ռեալն ողջացուցին [. . . .
ւա] և ի բանս:

Սուլբ ի մեղաց, սարաս հաւատա-
ցելոց, սերովբէ սրբասաց, սգաւոր երա-
նելի, սուր սրեալ հաւատացելոց, սուրբ և
ամենասուրբ, սիրած, սեղան խնկոց, սիք հիւ-
սիսի, սերմանիչ զսերմն բարի, սաւառնաթեւ
սլացող յերկինս, սահման հաւատոյ, սիրող
արարչին, սեւեռեալ ընդ սէրն:

Վարդաբոյս, վարդ վառեալ, վահան յու-
սոյ, վաղահաս պտուղ, վարսաւոր հրեշտակ,
վաճառող աստեանցս, վսամ վսամաց, վար-
դապետ վարդապետաց:

Տրիտուր Տեառն, տաճար Աստուծոյ,
տաղաւար եռակի, տունկ ի զնացս ջուրց,
տեղ ջանից, տատրակ ողջախոհ, տապանակ
կրտակի, տախտակ աստուածագիծ, տարագէմ
յերկինս, տաւիղ երգող, տղայ ի չարեաց,
տպագիծն ծանրագին, տեւալ դրախտ:

Բաբունի ճշմարիտ:
Յանկալի հրեշտակաց, ցած կամաք, ցից
խորանիս, ցրող ընչից, ցուցող ճանապարհին:

Փառք ազգիս փառաւորեալ յԱստուծոյ,
փայլեալ շափիւղա, փունջ մանիշակի, փա-
խուցեալ յաշխարհէ, փեսաւեր փեսային:

Քրիստոսի աշակերտ, Քրիստոսի ծանաթ,
Քրիստոսի ճշմարիտ ծառա, քառամանեակ
մանկանց, քանքաբաշահ, քուն կենցաղոյս,
քար կճճեա, քաղանդր աղտաբաղ, քաղա-
քապետ վերնոյն, քաւիչ մեղաց, քրիստոնէից
պարծանք:

Քանգի բե նորոգեցան կարգք և կրանք,
պսակեցան եկեղեցիք, լուսաւորեցան ման-
կունք, լիացան ժողովուրդք: Բե ճոխացաւ
Սիոն, կանաչացաւ սարն, աղատեցաւ աղատն,
բերկրեցաւ մայրն, խայտացին որդիքն, ցըն-
ծացին դստերքն: Որ զերիս ազգս և աղինս
լուսաւորեցեր, փառաւորեցեր, պերճացուցեր

* Լուս. «սիրելի Աստուծոյ»:

** Լուս. «զաւակ»:

*** Լուս. «նուստիս»:

**** Լուս. «վաղվաղ»:

և աղատեցեր ի մուրալո և յայպանելո և յաւտարաց ճարակելո:

Կացեր անարատ կատարեցեր զառաքինութիւն, լացեր զթերութիւն և զպակասութիւն Հայաստանեաց եկեղեցոյ. շինեցեր նկարեցեր զարդարեցեր զարմացուցեր, դեր ի վերո համայնից կառուցեր: Հաւատարեցեր զաթոռ հայրապետիս մերո Աղեքսանդրի, Հոռմայ, Անտիոքո և Եփեսոսո, որ էին ի քոհակատին պայծառ և համադաւան, իսկ ի յարդիս զաշացուք և պակասեալք, չքաւորեալ և աղքատացեալք: Եւ մեր ի [ԹՊ. 18^ր] նոյն կացեալք անշարժք և անվրդով՝ յիսկզբանէն և յառաջինն՝ յաւանդութիւն և ի սահման առաքելոյն շինեալք և ամրացեալք: Բեւ աւժանդակեալք՝ խարսխեալք և հաստատեալք, զի թէ ոչ Տեառն զաւրութեանց թողեալ էր զքեզ մեզ զաւակ՝ եղեալ էաք իրրե զՍողոմոն և զԴոմոն, այսինքն զորս յիշեցի նախ:

Բանդիչէ և չէ աղգանքիժ և անարատի հաւորս և ի գործս բայց ի մէնջ: Զի թէ պէտ և քաղաքաւ և առաքելաւ և բազմութեամբ պանծան՝ սակայն ոչ տեղեաւ ընտրի որ՝ և ոչ ընդ բազումս հաճի Տէր: Զի լաւ է մի կամարար Տեառն քան զբաւրս զանցեալ: Եւ որ զգործս Արրահամու գործէ, նա է որդի նորա. նոյնպէս և որ զսահմանս առաքելոյն պահէ՝ նա է աթոռակալ նոցա: Ապա թէ այսպէս է՝ մեր աթոռ է վիհազոյն ամենեցուն՝ հաւասար աւետարանչաց և աշակերտաց, զի զնոցայն չըւէ ուղի: Եւ զայս քեւ ունիմք, ով երանելիդ Մեսրոբ՝ որ բացատրիս՝ տէր սուրբ և սեփական:

Բեւ երանելի եղեւ աշխարհս մեր, պերճ և պայծառ յազգս և յազինս, ձոխ եկէքս և աւտարքս, անպարտելի թագաւորս և զաւրքս՝ ի հաւատս և ի հոգիս, աստուածադան հայրապետս և գեր ի վերո պսակեալ փառաք եկեղեցիս: Բանդի կանդնեցեր սմա աշտարակ յասպի, և դուռն վանի՝ և պատ յակնց պատուականաց, սիւն երկաթի և պարիսպ պղնձի՝ և դու ջահաստուածափառ ի մէջ սորա, որ առեր զիւլայն՝ և բարձեր զպատրուակն, վերացուցեր զքողն՝ լուծեր զդոռուէս պանրացեալ կաթինն. բարձեր զցնցուղս ստեան զիեւ զիւրաւ փափաքողաւցս անխարդախին,

սնուցեր զմանկուէս, պարարեցեր զպատանիս, սանձեցեր զերիտասարգս և զաւտարգս. * զաւրացուցեր զայրս, փափկացուցեր զծերս, սրեցեր զտեսուչս, կատարեցեր զքահանայս, սրբեցեր զսարկաւազս, զբրուտեցեր զդպիրս, կարգեցեր զկէրս, կեցուցեր զկրօնաւորս, կերակրեցեր զսրբազանս, լուսաւորեցեր զերախայնս, բժշկեցեր զայսահարանս, ապրեցուցեր զապաշաւողսն, մաքրեցեր զանմաքուրսն, արարեր զայս և առնես միշտ: Եւ յորժամ զամենայն լցեր կատարեցեր և փարթամացուցեր, հաներ զանարգն և եղեր զարգաւորն՝ լըցեր և զսահման թըւոյ աւուրց կենցաղոյս, ոչ վատեալ և խոշորացեալ, զովեալ յիւս ճանապարհի, անսղալ ընթացար, որպէս էիր ի մուտն՝ նոյն ես և յիւս ի չարեաց և ոչ ի բարեաց:

Ընդ ուխտ անցանելով՝ ոչ խոնաւացար, ընդ տիղմն՝ և ոչ աղտեղացար, ընդ լարժուտս՝ և ոչ սահեցար, ընդ դժուարս՝ և ոչ զթեցեր, ընդ փուշս՝ և ոչ խոցեցար:

Անդիզ ի զազանացս՝ և անխած ի թիւնաւորացս, անբմբռնելի ի յաղբիցս, անպաղ ի պաղէս և անկէզ ի հրոյս, անտապ յարեւս և անհայեաց ի հայողէն, անկոխ ի կոխողէն՝ և անխայթ ի թագաւորական իժէն, անապական եռակի մասամբ, մտաք մարմնով և ոգուով: Ընդ ամենայն հասակս չըւեալ, ոչ ի հեշտալեացն հեշտացար՝ և ոչ ի զարշեւացն զարշեցար, և ոչ ի դարն զլորեցար՝ և ոչ ի զիւրն զաղարեցար, այլ ընդ ամենայնն անսայթաք ճնմեցար, որպէս զՏէրն իմ և զԱստուածն Յիսուս հասեր ի նաւահանդիստ:

Ալեկոծեալ խռովեալ և ոչ ընկղմեալ, եհաս ժամանակ դարձի, նըւիրեցար, մենամարտեցար, զընթացսն կատարեցեր, զիմեցեր ի պըսակն, ի փառսն և ի պատիւ, և արձակեալ [ԹՊ. 19^ր] Երբ ի կապանաց, դարձար յորմէ ստեղծար:

Մթացան լուսաւորքն, կրկնեցաւ ամպն, շարժեցաւ պահապանն, թիւրեցաւ զաւրաւորն, կայացաւ աղաւթին, խցաւ ծիրպն, ախեցաւ դրունքն, հատաւ լարն, փշրեցաւ մանեակն, մանրեցաւ սափորն, դարձաւ փուշմն առ փշողն միայնացաւ ճնճողէն, ելաւ ի բանդէն:

*. Լուս. «զերիսասարգս».

ա. 260. «պաշխվն».

Եւ այս՝ յորճեմ վայրի. յԱրարտեան դաշտին, մերձ առ Մասիս լեռինն, յամենաբարի տեղւոջ՝ ուր անասելի հրաշս ցուցաւ, ուր երկրորդ հաւնա եղաւ փոխանակ Եդեմաւ, եւ պահեցեալ սերմն կենդանեաց՝ անդ սերմանեցաւ: Եւ հայրն Բ հոգեւոր՝ ի խորոց ծանուցաւ, եւ երգն լցաւ, զի ճշմարտութիւնն յերկրէ բուսաւ, եւ արդարն ի վերուստ երևեցաւ. ջուրն ծնանէր զարմատն մարմնո՞ր, զսաղմն առեալն ամաւ՝ եւ եկիր զարմատն հաւատոյ զյղղացեալն ընդիքտիոնաւ մի: Դ

Անդ թագաւորն զբաւանայր՝ եւ յայլո յայլ փոփոխէր, ի նմա իջանէր Միածինն՝ եւ շողն աստուածաին կաթէր: Ի վաղարշաշէն քաղաքի վախճանէր, յաթոռ արքայիցն մերոց, եւ ճառագայթ ակներեւ ծագէր իրր՝ զԹիաճան ի վերա նորա:

Ո՛վ խորք մեծութեանն Աստուծոյ, որ այնպէս փառաւորէ զփառաւորիչս իւր եւ հանցէ ի լոյս զարդարութիւն արդարոց, որպէս արար այսաւր ի վախճան սրբոյս՝ զոր արար ի փոխումն մաւր իւրոյ. երկուց կուսից եցոյց զլոյս աստուածութեան իւրոյ՝ եւ էջ ի խնդիր նոցա՝ առաւել մեծարելով քան զբնաւ սուրբս եւ զսիրելիս իւր: Կարծեմ՝ ցուցաւ փոքրն զոր ասաց մեծ քան զՅովհաննէս: Բան զի զայս ոչ արար բնաւից սրբոց՝ զոր արար սորա: Եւ առեալ տանէին զմարմինն սուրբ յԱրշակաւանն եւ զեղ բացագոյն ի քաղաքէն, եւ լոյսն երթայր կամարաձե ի վերա նորա, եւ հրեշտակք երդակցէին քահանայից՝ երգել զամբանական երգ մինչեւ հանգուցին ի խորափտին. եւ ծածկէին զաւրհնեալն աւրհնութեամբ՝ եւ զհոգիացեալ հոգն հոգով:

Զոր երանութիւն՝ կամ զոր գովասանութիւն տացուք այնմ վայրի՝ որ այնպիսո արժանացաւ շնորհի:

Արդ՝ աւրհնեալ Ի եւ դու ի դաշտս եւ

ա. Լուս. «նոյ». Զեռ. «հալմ». Բ. Լուս. «ս. Գրիգոր». Գ. Լուս. «նոյ կամապետ». Դ. Լուս. «Լուսաւորիցն». Ե. Առշակաւանն զեղ հաւանական գրչի սխալն եւ «Առշակաւանն»ի սեղ:

Գ. Գաւիթ տնայորից սխաժ շատ սովորական են մերրոգներս մէջ այսպիսի օրհնութիւններ:

ի զիւրս մարդագետինս եւ ի խաղս, որ եղեր ընդունող մաքուր մարմնոյ նորա:

Աւրհնեալ եւ ի բնաւս ա. եւ ի բաժինս, զի էջ առ քեզ անէջն եւ անեղն լուսաւորեաց եւ աւրհնեաց եւ սրբեաց զքեզ:

Աւրհնեալ եւ դու ի հոգս եւ ի հոգեղէնս, զի խառնեցաւ ընդ քեզ երրորդութեանն տաղաւարդ՝ եւ անմեղ մարմինդ ոսկիացեալդ ի քուրացս՝ ի քեզ ծածկեցաւ:

Դու եւ երանելի՛ զի շաղխեցար արեամբ երեսուն եւ ութիցն, եւ ներկեցար վարդագոյն՝ ներկողտ որդան, ծիրանեցար, ծարիրեցար, պարարեցար, պարարտացար, եւ պարգաւաճեալ պսակեցար: Երանի է քեզ եւ բնակչաց քոց՝ որ եղեր դամբան կուսից եւ յարկ յաւիտեան անուանել զանուն նոցա ի քեզ. ի քեզ հրաշագործեաց Աստուած՝ որպէս ի Տայան դաշտին:

Երանի հոգոյն ուր հոգացաւ մարմինն, եւ երանի աւդոյն յոր միացաւ շունչն, եւ թէպէտ եւ մեկուսացաւ ի սգալեացս տեսանելոյ՝ սակայն իմանալի հոգեւորն ընդ մեզ է անանջատ, եւ զաւրութիւն հոգեւորն անդատելի է յոսկերաց սորա՝ որպէս ցուցաւ յՆիխեոս [Թղ. 19^ր]:

Իսկ յաւանդել զոգին ի ձեռն Աստուծոյ՝ լցաւ անուշահոտութեամբ տունն եւ տաճարն, եւ ի լրուել խաւսիցն, խելադարեցան մերձակայքն, մօրմոքեաց մայրն Սիոն, հառաչեաց հարսն, որբային աւրիորդքն, ճրչեցին փեսաւէրքն, աւաղէին աղքատքն, տըրտմէին տնանկքն, մօրմոքէին մանկունքն, կողկողէին կուսանքն, արտասուէին ամուսինքն, տխրէին աղայքն, ծմրէին ծերքն, աղատէին արքն, կանչէին կանայքն, սրթային սարկաւագունքն, քրքւէին քահանայքն, եղուկէին եպիսկոպոսքն, վաէին վարդապետքն, հաւասարէր եւ հայրապետն, կատարելով զարկէնս սոցոյն որպէս եւ Տէրն առ սիրելին, եւ յիրաւի զի զրկեցան յայնպիսի բարւոյն:

Զինչ արարին եւ աշակերտքն որք եկին յԱթինա՝ զոր էր յղեալ յառաջագոյն, խնամելով եւ յեռ մահուն, որպէս զԱստուած եւ զՄովսէս: Որք եկին խնդութեամբ՝ եւ լրւեալ

լցան արտաբերութեամբ անտանելի առեալ զսուգ հայրենի: Իսկ ի առեսանել և ի լսել զնշան լուսոյն՝ փարապետեալ սուգն՝ և հերքեցաւ խաւարն, և կատարեցաւ առաջը սգոյ լալեացն:

Իսկ թէպէտ և նոքա մարդկաւորէն խորհէին՝ սակայն նա ազատեալ ի բանտէս՝ և մերկացեալ յախտէս, թեթեւացեալ ի բռնէս, վերանայր յերկինս պար առեալ անմարմին դասիւք, որք ողջունէին, համբուրէին, հրճէին, յուզարկէին, առաջնորդէին. զի որքան մարդկայինքնս արտմէին, հրաբոցքն ուրախանաին, զի թէ ի ներքնոցս պակասեաց ի վերինսն յառելաւ, յաղագս որոցընծացեալ եռակի եռիցն:

Արթնանայր աթոռն, քրքրէր քերովբէն, սաղմոսէր սերովբէն, առփէր տէրութիւնքն, զըւարձանայր վաւրութիւնքն. իշխանութիւն տաին իշխանութիւնքն, պատուէին պէտքն, հրճրէին հրկշտակապետքն, համբուրէին հրկշտակքն. և համազումար եղեալ իննեակ դասուցն, աւրհնէին զովէին զըզէին, և իւրաքանչիւր յիւր դասն կոչէին. թերեւ և ընդ միմեանս կադէին կարգել ընդ նոսա ըզնմանն նոցա: Եւ առեալ մեծին յեթնաստեղեան խորաննն, առ մայրն Տեառն և բովանդակ կուսանան և մեծարէին բոցափայլքն՝ և խըրախ յարգարէին: Ելանէր և Հայրն՝ և անկանէր զպարանոցաւն, զգեցուցանէին պատմութեան, զնէին մատանի տաին կաշիկ, զե-

նուն զըւարակ, ուտէին ըմպէին ուրախ լինէին:

Հայրն հիւրընկալ, Որդին մատուակ, Սուրբ Հոգին բաժակ, իմաստութիւնն կերակուր, այսպիսեաց՝ այսգոն է արժանն և ընդունելութիւնն:

Եւ արդ՝ հայր սուրբ և վարդապետ բարի, որ փառաւորեցար անձառ փառաւք, մտեր ի յառադասան, և խրախացար ի հարսանիսն, յիշեա զարեամբ պսակեալն յանաւրինաց՝ թերեւ արժանասցին այդր կենաց և համայնիւ ի կատարել զյիշատակս քո յաւէտ մերս ժողովոյ, հայցեա ի սիրողէն քո զբաւութիւն և զթողութիւն մեղաց, զի արժանի լիցուք ընդ քեզ և ընդ ամենայն սուրբս փառաւորել: զՀայր և զՈրդի և զՀոգիդ սուրբ այժմ և միշտ և յաււ:

Երջանկաց պարոց՝ յերկիր անկեալ եղիկի ոգիս Յոն. եպ. արքանդար Հայոց՝ հայցեմ յիշել զիս և զիսն ի Քրիստոս, զի յոյժ փափաքմամբ եսու բերել զսա ի Հոռոմիդեան զի լիայր յերկիրս. և ես մեռամբ իմով գրեցի ի յոյժ վշարեւ աւուրսս: Եւ որք յիշեմ զմեզ ի քարի՝ և զմեզ յիշեցի անմոռացն Աստուծ ի քարի: Եւ քախաւարմ մեր՝ մասն քարի գտցն ի Քրիստոս Աստուծոյ և մեղուցեցն մեր, երբ քանի և երբ գործով՝ բողոքիմ համայնիցն շնորհեցի Քրիստոս: Եւ նմա փառք յաշխեան ամեն: [բղ. 20 ա]

ՄԵՍԸՈՂ ՎԱՐՈՒՊԵՏ

ՆՈՐ ՍՏՆՅՈՒՆԺ ԳՐԷՐ.

1. Պատկերազարդ բնական պատմութիւն, Գ. գիրք. Համբարանորիւն. Հ. Գ. Է. Մենէվիշեան. Վիեննա, 1897. գինն է 85 կոպ.
2. Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վերայ. ուսումնասիրութիւնք և քաղաածքներ, Հ. Վ. Է. Ս. Յովնանեան. մասն առաջին՝ ռամկօրէն մատենագրութիւն. Տետր Բ. Վիեննա, 1897. գինն է 3 Ֆր.
3. Պրոֆէսսոր Հ. Գեյցեր. Համառօտ պատմութիւն Հայոց, յաւելուածովք թարգմանչին, Թարգմանեց Հ. Գր. Վ. Գալէմբարեան. Վիեննա, 1897. գինն է 60 կոպ.
4. Խաչատուր Արտեման. (արտատպած «Լումայ» գրական հանդիսից). Ներսէս Տ. Վարապետեան. Տփլիս. 1897. գինն է 60 կոպ.
5. Սարսափելի վրէժխնդրութիւն կամ Սատանա-

- նրի կամուրջը. Պաղուխին. Թարգմ. Լ. Է. Մ. Գեորգեանի. Թիֆլիս 1896. գինն է 20 կոպ.
6. Բանաստեղծութիւններ. Արշակ Յարութիւնեանի, Թիֆլիզ, 1897. գինն է 40 կոպ.
7. Միքայէլ Ղազարեան Նալբանդեան. Եր. Շա. հաղիդ, կենսագրութիւն. (արտատպած գրականական և պատմական հանդիսից). Մոսկուա, 1897. գինն է 60 կոպ.
8. Քննական կրօնագիտութիւն հանդերձ ապացուցութեամբք կրօնից. Տ. Սահակ քահ. Տ. Սարգրեան. Երկրորդ տպագրութիւն ընդարձակեալ ի հեղինակէն ամենայն կարեոր խնդրովք և լուծմամբք նոցին, Կ. Պոլիս. 1897. գինն է 25 զուրուշ:
9. Լումայ, գրական հանդէս. Երկրորդ տարի. գիրք երկրորդ. 1897 ամի, Տփլիս.